N 2

# ԷՔՍՊՐՈՄՏ

Շահեն Շահինյանին

Որպես աստղ դու կփայլես՝
ու կմնաս մեր սրտերում,
Միշտ հավիտյան դու կմնաս՝
Շահեն–Վարպետ՝ մեր սրտերում:

Մեր պապերի ձայնը լսվեց
մեսրոպատառ քո գրքերում,
Ժողովրդի հեքիաթները
կենդանացան քո գրքերում:

Խրատական քո խոսքերով
աշխարհ եկար ու գնացիր,
Հայրենասեր և ազգասեր
մեր սրտերում դու մնացիր...

Մեծ կորուստ է այս մեզ համար,
որ մեզանից բաժանվեցիր,
Չենք մոռանա մենք երբեք քեզ
մեր սրտերում դու մնացիր...

Քո ,,Դարավոր արմատները,,
միշտ կմնան մարդկանց սրտում,
Քո հայացքը, մեղմ ժպիտը՝
կպահպանենք մենք մեր հոգում–

Չենք հավատա, որ դու չկաս,
ու չես քայլի Չալթր գյուղում,
Փափուկ լինի անկողինդ՝
քո մայր երկրի սևահողում...

17–18 մարտի 1988թ.

ՂԵՎՈՆԴ ՆԱԻՐՅԱՆ